



## ԳԵՎՈՐԳ ՀԱՎՈՐՅԱՆ

ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության  
ամբիոնի դասախոս

### ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՐԳ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ\*

Հոդվածում քննարկվում է ինքնասպանության հոգեբանության՝ իբրև գիտակարգի դիտարկման իրավասության հարցը: Հոգեբանության այս ճյուղին առաջադրվում են այն նվազագույն չափանիշները, որոնց բավարարումը պարտադիր է բոլոր գիտակարգերի համար:

Կատարված վերլուծություն ի ցույց է դնում այն բազմաթիվ անորոշությունները, որոնք առկա են սույն հայեցակարգում՝ կասկածի տակ առնելով ինքնասպանության հոգեբանության՝ գիտակարգ լինելու հանգամանքը:

**Հիմնաբառեր.** *ինքնասպան (սուիցիդենտ), հոգեբան, նպատակ, թիրախ, կանխարգելում, գիտակարգ*

JEL: Y8, Y90

*...ես իմ կեանքն եմ տալիս, որպեսզի վերստին այն առնեմ:  
Այն ինձնից ոչ ոք չի վերցնի, այլ ես ինքս եմ տալիս.  
Իշխանություն ունեմ այն տալու և իշխանություն ունեմ  
վերստին այն առնելու. այս պատվերն իմ Հորից ստացա:*

**Հովհաննես 10:18**

Ոչ մի մասնավոր գիտակարգ չի կարող ու պետք էլ չէ, որ ինքն իրեն ենթարկի քննադատության (կանտյան իմաստով)՝ ինքնավերլուծության: Ուստի՝ ինքնասպանության հոգեբանությունը նույնպես, լինելով մասնավոր գիտակարգ, չունի այս նկրտումը: Փոխարենը, ինչպես ցանկացած գիտակարգ,

\* Էպիստեմոլոգիական (գիտաբանական) մոտեցում

կարիք ունի կատեգորիալ ապարատի վերհանման, հասկացությունների ճշգրտման, դասակարգման, դրանց հարաբերությունների հստակեցման և այլն: Վերջապես, ինչպես ցանկացած գիտակարգ, այնպես էլ ինքնասպանության հոգեբանությունը պետք է հստակ սահմանազատվի այլ գիտակարգերից (խնդրակարգային դաշտով) և ունենա իր ուսումնասիրության օբյեկտը:

Սրանք այն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պահանջներն են, որոնք ներկայացվում են ցանկացած գիտակարգի, և եթե չեն բավարարվում այս նվազագույն պահանջները, ապա դրա գոյությունը, որպես այդպիսին, կարելի է դնել հարցականի տակ. մի բան, որ պնդում ենք այս հոդվածում՝ ընդունելով սակայն, որ այս հոգեբանությունը պետք է յուրաքանչյուր հասարակությանը և, այսպես թե այնպես, արդեն առկա է իրականության մեջ:

Թե որքանով է անհրաժեշտ կամ կարևոր ինքնասպանության հոգեբանության՝ գիտակարգ համարվելը, բոլորովին այլ հարց է. մեզ պարզապես հետաքրքրում է ինքնասպանության հոգեբանության էությունը՝ կանտյան հարցադրման լույսի ներքո, այն է՝ ինչպե՞ս կարող է ինքնասպանության հոգեբանությունը դիտարկվել որպես գիտություն:

Առանձին փաստարկում, կարծում ենք, չի պահանջում այն դրույթը, որ ինքնասպանության հոգեբանության առանցքային առարկան ինքնասպանն է (սուիցիդենտ): Ինքնասպանի՝ որպես ինքնասպանության հոգեբանության առանցքային դերակատարման որոշակիացումը հենց այն էական խնդիրն է, որի պարզաբանումից էլ կախված են մնացած բոլոր ներգիտակարգային հարցերը: Ուրեմն, չհավակնելով այս փոքրիկ քննության շրջանակներում ինքնասպանության հոգեբանության հասկացությանը ողջ համակարգի դիտարկմանը, կփորձենք որոշակիացնել միայն մի հարց. ո՞ր ինքնասպանն է սուիցիդալ հոգեբանի թիրախը:

Հարցի հնարավոր պատասխանը, որը ենթադրելու է ինքնասպանության հոգեբանի գործունեության շրջանակների նեղացում, չի սահմանափակում սույն ոլորտի տեսաբանի ուսումնասիրության սահմանները, այլ հստակեցնում է նրա նպատակակետը, գործունեության սահմանագծերը, ինչն էլ բխում է հենց սուիցիդալ հոգեբանության էությունից: Այսպես՝ Համաշխարհային առողջապահական կազմակերպության 2001 թ. հաշվետվության մեջ ինքնասպանությանը վերաբերող դրույթները, կարելի է ասել, մանիֆեստի դեր են կատարում ներկա ինքնասպանագիտության համար, հստակ հիմնավորում և նպատակադրում են ինքնասպանությունների կանխարգելումը:

Ուստի, ինքնասպանության հոգեբանը, որը, առաջին հերթին, կոչված է անձի մակարդակում ձեռնարկելու կանխարգելիչ մեխանիզմների մշակում և իրականացում, չպետք է առավել ընդգրկուն հիմնախնդիրներով զբաղվի: Օրինակ՝ իրեն կյանքից զրկելու իրողությունը մարդու ազատության դրսևորում է, թե՞ համաշխարհային ներդաշնակությունը պահպանելու նպատակաբանական միջոց, որը կանխապես սահմանվել է ինչ-որ տիեզերական լոգոսի կողմից, չպետք է հետաքրքրի ինքնասպանության հոգեբանին: Իր գործունեության կամ դրա՝ իբրև գիտակարգի հաստատումը ևս սուիցիդալ հոգեբանի անելիքը չէ: Թե ինչ ազդեցություն կարող է ունենալ անձի ինքնասպանությունը հասարակության վրա, նույնպես այս ուղղության հոգեբանի ուղղակի գործառույթը չէ: Նրա խնդիրը չէ նաև հաշվարկել և քանակական օրինաչափություններ գտնել, ասենք՝ ազգային կամ մշակութային առանձնահատկություններով պայմանավորված ինքնասպանությունների վերաբեր-

յալ: Երևույթների այս շարքը, որն անուղղակիորեն առնչվում է ինքնասպանության հոգեբանությանը, սույն հոգեբանի գործառնություններից դուրս է, և այդ շարքը կարելի է շարունակել:

Այս ամենն, իհարկե, բնավ չի նշանակում, թե ինքնասպանության հոգեբանը կարիք չունի այլ գիտակարգերի նվաճումներից օգտվելու: Վերլուծությանը պարզելով, որ միևնույն դեպքերը տեղի են ունենում բազմաթիվ անհատների հետ, սակայն նրանցից միայն մեկն է (կամ մի քանիսը) դիմում ինքնասպանության, նա պետք է կարողանա վեր հանել այն հոգեկան «խորհրդավոր» երևույթները, որոնք դառնում են նման վարքի դրսևորման պատճառ:

Կարծում ենք՝ բոլոր գիտակարգերի դեպքում էլ դժվար է ապահովել *ceteris paribus*<sup>1</sup> (այլ հավասար պայմանների ստեղծում, որոնց առկայության դեպքում միևնույն պատճառին կից միևնույն հետևանքը) սկզբունքի իրացումը, սակայն այս պարագայում միևնույն պայմաններն ապահովելու անհնարինությունը «աշխատում է» հոգուտ ինքնասպանության (և ոչ միայն) հոգեբանության:

Եթե հնարավոր լիներ «միևնույն գետը երկրորդ անգամ մտնել»<sup>2</sup>, այսինքն՝ ապահովել *ceteris paribus* սկզբունքի գործադրումը, ապա սուիցիդալ հոգեբանն անելիք չէր ունենա: Կպահանջվեին «գետի մասնագետներ (սոցիոլոգներ, փիլիսոփաներ, բնախույզներ և այլն», սակայն ոչ երբեք՝ «գետը մտնողի» հոգեկանով զբաղվող մասնագետներ (ինքնասպանության հոգեբան): Մեկնաբանե՛նք փոխաբերությունը. սա կնշանակեր, որ, ի սկզբանե, մարդու մեջ առկա է ինքնասպանության հակում, և բավական է, որ ստեղծվեն համապատասխան պայմաններ ու առիթ (իսկ պատճառն ինքնասպանության հակումն է), ու մարդը կդիմի ինքնասպանության:

Քանի որ իրականում այսպես չէ, ուրեմն մարդու՝ ինքնասպանության դիմելու պատճառը, պայմանների (առնվազն՝ մեծ մասի) ու առիթի հետ միասին, ներմուծվում է մարդու հոգեկան աշխարհի արտաքինից: Եվ քանի որ միևնույն հանգամանքները տարբեր անհատների վրա տարբեր ներգործություն են ունենում, ուստի «ներմուծումների» դասավորվածությունը, ինքնասպանությունը խթանող կամ արգելակող գործոնների քանակը, դրանց ուժգնության աստիճանը (և այլ որակներ նույնպես), կախված ընդունված կերպից, կորոշի հենց ինքնասպանության հոգեբանը: Հոգեբանի ուսումնասիրության դաշտում է գտնվում նաև (թեև՝ մասամբ) այն հնարավոր կանխորոշվածությունը (լինի գենետիկական, թե արտաքին մշակութային ժառանգորդամբ), որով պայմանավորված էլ՝ արտաքինից ներմուծումներն այնպես են դասավորվում, որ ձևավորվում է սուիցիդալ հակում:

Այսպիսով՝ *ceteris paribus*-ի՝ իրականության մեջ անհնարինությունը մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ ինչպես ամեն մարդ հավանական սուիցիդենտ է, այնպես էլ ամեն սուիցիդենտ\* կարող էր չլինել այդպիսին և հասներ իր կյանքի բնական լրմանը՝ միշտ մնալով «հնարավոր սուիցիդենտ»:

<sup>1</sup> Տե՛ս <http://www.investopedia.com/terms/c/ceterisparibus.asp>

<sup>2</sup> Ակնարկվում է Հերակլիտեսի հայտնի արտահայտությունը: Առավել մանրամասն տես **Асмус В.**, Античная философия. М., «Высшая школа», 1976, էջ 33:

\* Այստեղ «սուիցիդենտ» եզրույթն օգտագործվում է կանխարգելման ենթակա անձի իմաստով:

Վերջապես, սուիցիդալ հոգեբանի գլխավոր նպատակն այն է, որ գտնի այն պատճառները (հայտանիշների միջոցով), որոնք անձին մղում են ինքնասպանության. պատճառներ, որոնք թեև սերում են արտաքին աշխարհից, բայցևայնպես, գտնվում են ոչ թե արտաքին աշխարհում, այլ հենց մարդու հոգեկանում: Դրանից դուրս, սուիցիդալ հոգեբանի համար, պատճառ չկա, քանի որ միայն հոգեկան աշխարհում է, որ միևնույն իրողությունները (համապատասխան դասավորվածություն ստանալով և փոխազդեցության մեջ մտնելով) դառնում են պատճառ(ներ): Արտաքինները պատճառի պատճառ են կամ աղբյուր և դուրս են հոգեբանի ուղղակի հետազոտության շրջանակից:

Այս և հետագա բոլոր եզրակացությունները բխում են Կ. Վարդանյանի՝ ինքնասպանության գործողության (օպերացիոնալ) – նկարագրական սահմանումից. «Մենք գտնում ենք, որ ինքնասպանությունը հոգեբանական դեգրադացիայի արդյունք է, երբ անձը հոգեկանի ախտաբանական վիճակում ինքնական (ներծին կամ արտածին ազդակներից դրդված) դիմում է լետալ ավարտով աուտոդետրուկտիվ գործողությունների»<sup>3</sup>:

Կարծում ենք, որ չի սխալվում Կ. Վարդանյանը, երբ այս սահմանման մեջ ներառում է նաև հոգեպես լիովին առողջ անձանց: Այլ հարց է, որ հեղինակն ուղղակիորեն չի անդրադառնում բուն թիրախի խնդրին (դա նաև տրամաբանական է), սակայն կարելի է ենթադրել, որ նա՝ որպես իր գործունեության թիրախ է դիտում բոլոր կարգի ինքնասպաններին. մի բան, որին մենք կողմնակից չենք:

Այսպես՝ ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Է. Դյուրկիայն իր «Ինքնասպանություն. սոցիոլոգիական էտյուդ» գրքի նախաբանում բավական խորքային վերլուծության է ենթարկում «ինքնասպանություն» հասկացությունը և անուղղակի ինքնասպանին նույնպես տեղ է տալիս այս դասում. «... ինքնասպանություն է կոչվում ցանկացած մահվան դեպք, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն համարվում է դրական կամ բացասական գործունեության արդյունք՝ կատարված հենց զոհի կողմից, եթե վերջինս կանխավ գիտեր իրեն սպասվող արդյունքի մասին»<sup>4</sup>: Դյուրկիայն, ինչպես և արդեն աշխատության վերնագիրն է հուշում (էտյուդ՝ նախապատրաստական ուրվագիծ), նպատակադրվում է, ստատիկ դրության միջոցով, ի թիվս այլնի, ընդունել «սոցիոլոգիա» գիտակարգը, և բնավ պատահական չէ, որ նրա աշխատության մեջ առաջնայինը հասարակականն է:

Արդ՝ այն անձը, ով ուսումնասիրության առարկա է սոցիոլոգի համար, մեծավ մասամբ, չի կարող այդպիսին լինել ինքնասպանության հոգեբանի համար: Նույնը և հակառակը. դա հիմնավորում է նաև Դյուրկիայնը՝ նշված աշխատության նախաբանում<sup>5</sup>: Իսկ մենք կարծում ենք, որ այս տարբերակումը ոչ միայն պետք է կատարվի գիտակարգային, այլ նաև գործնական-նպատակային բաժանման հիմքով:

Եթե որոշ ինքնասպանություններ չեն կարող հետաքրքրել սոցիոլոգին (ըստ սոցիոլոգիայի հետազոտության դաշտի և օբյեկտի), ապա որոշ ինքնասպաններ էլ հոգեբանի պետք չունեն ընդհանրապես: Նրանք պետք է

<sup>3</sup> Կ. Վարդանյան, Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շղթայում (ինքնասպանի հոգեբանական նկարագիրը), Եր., 2008, էջ 33:

<sup>4</sup> Дюркгейм Э., Самоубийство: социологический этюд, пер. с фр., под ред. В.А. Базарова. М., "Мысль", 1994, с. 7.

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 8:

ինքնասպան լինեն\*։ Օրինակ՝ քրիստոնյա աշխարհի մեծագույն սրբերից մեկը՝ Իգնատիոս Լաոդիկեցի (Անտիոքացի) Աստվածազգայացը, ով պայքարում էր դոկետիզմի՝ երևութականների հերձվածի (աղանդի) դեմ, ձերբակալվեց ու տարվեց Հռոմ։ Ճանապարհին, մահապատժից խուսափելու բազմաթիվ հնարավորություններ ունենալով, ոչ միայն չօգտվեց դրանցից, այլև, երբ զինվորները, նրա թևերը բռնած, ուղեկցում էին դեպի առյուծներով լի արեման, խնդրեց նրանց, որ իրեն բաց թողնեն և կամավոր քայլեց դեպի առյուծները։ Մինչ այդ, երբ քրիստոնյաներն առաջարկում էին զինվորներին կաշառելով՝ փախցնել նրան, նա պատասխանեց, որ ինքը գիտե, թե ինչն է իրեն օգտակար, ապա առարկության բոլոր ճանապարհներն իսպառ փակեց՝ ասելով. «Աստծոյ ցորենահատ եմ, գազանների ատամներով կաղացուեմ եւ Աստծոյ սուրբ հաց կը դառնամ»<sup>6</sup>։

Նա ոչ միայն տենչում էր նահատակության, ասենք, ինչպես Որոզինեսը<sup>7</sup> (կամ բոլոր կամավոր նահատակները), ով իմանալով, թե հորը նահատակում են, փորձեց դուրս վազել, որպեսզի իրեն նույնպես սպանեն..., այլև իր նահատակությամբ ապացուցում էր երևութականների սխալ լինելը<sup>8</sup>։ Ինչը և կատարեց փառավորապես։

Արդ՝ կարո՞ղ ենք ասել, թե Իգնատիոս Լաոդիկեցին ինքնասպանության հոգեբանի կարիք ուներ։ Այո՛, եթե մենք ոչ միայն աթեիստ ենք, այլ նաև՝ նիհիլիստ։ Եվ, հետևաբար՝ սուիցիդալ հոգեբանի կարիք կունենային նաև Սոկրատեսը, «եբրայեցիների հայր» Ռաբսը (տե՛ս Բ Մակար. 14:37-46), վերջապես, Սիդհարտա Գաուտամա Բուդդան ու Տեր Հիսուս Քրիստոսը։

Ինքնասպանության հոգեբանի թիրախ չի կարող լինել ո՛չ ճապոնացի սամուրայը, ո՛չ Կրիշնալոկա ձգտող, համապատասխան ուղղություն ունեցող բրահմանը, ո՛չ էլ Հովհաննես Մազմանյանը (Մազմանով) կամ Հունան Ավետիսյանը և բոլոր այն մարդիկ, ովքեր հանուն որոշակի նպատակի ինքնասպան են եղել։

Այստեղ տրամաբանական հարց է առաջանում. ինչո՞ւ այսօրինակ վարքագծերը ենթակա չեն կանխարգելման, բայց Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» վեպի ազդեցության տակ ինքնասպանության դիմողները՝ ենթակա են։

Հարցը պահանջում է զուտ մետաֆիզիկական հնարավոր «արդարացումներ», և ստորև ներկայացնում ենք դրանցից մեկը. միայն մարմնի կյանքը, կամ ուղղակի գոյությունը, եթե չլինի էլ՝ ոչինչ չի փոխվի։ Ավելին, եթե գիտնականի սառը դատողությամբ խորհելու լինենք, ապա՝ այսպիսի կյանքը կա՛մ սկզբունքորեն հնարավոր չէ, կա՛մ էլ ավելի լավ կլինի, եթե չլինի։ Նման մի բան է ակնարկում Վահան Տերյանն իր «Հոգևոր Հայաստան» հոդվածում, իհարկե, այլ խնդրի վերաբերյալ և այլ պահանջով։ Տերյանը, խորհելով այն մասին, թե ի՞նչն է մտահոգում ազգային մտավորականին, հայտարարում է «...մենք մտահոգվում ենք այդ ֆիզիկական գոյության մասին ոչ լոկ մարդասիրական զգացմունքներից դրո՞ված, այլև որոշ ազգային տեսակետ ունենա-

\* Տեսակետն այստեղ ներկայացվում է իդեալական կերպով՝ ինքնին։ Այս պարագայում արտամշակութային հնարավոր մարդասիրության մասին խոսք լինել չի կարող։

<sup>6</sup> Ս. Իգնատիոս Աստուածազգեաց, Թղթեր, Եր., 2003, էջ 34։

<sup>7</sup> Տե՛ս, Ե. արքեպիսկ. Պետրոսյան, Որոզինես, Աղոթքի մասին, Առաջաբան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007, էջ 6։

<sup>8</sup> Տե՛ս, Ս. Իգնատիոս Աստուածազգեաց, նշվ. աշխ., էջ 45-47։

լով»<sup>9</sup>: Նա պայքարում էր այն հասարակական հոսանքի դեմ, որը ձգտում էր պահպանել, փրկել հայերի՝ բացառապես ֆիզիկական գոյությունը, իսկ պոետ-հրապարակախոսը հասկացնում է, որ լոկ ֆիզիկական գոյությունը հայի գոյությունը չէ, այլ՝ ինչ-որ մարմնի: Սա զուտ մարդասիրություն-մարմնասիրություն է, սակայն ոչ երբեք՝ հայասիրություն:

Նույնը կարելի է ասել նաև այս դեպքում, միայն թե ավելի խիստ. միայն մարմնի գոյությունը չգոյությունից էլ վատ է՝ հենց այդ կենդանի մարմնի համար անգամ (էլ չենք խոսում մշակութայինի մասին): Ուստի, եթե մարդը համոզված է, որ ինքը պիտի ինքնասպան լինի, որովհետև դա իր համար «կյանքից ու գինուց» թանկ է, ապա նրան խանգարելն իմաստ չունի: Ավելին, նրան ֆիզիկապես կանխարգելած մարդը ոչ մի բարոյական պատասխան չի կարող տալ ընդդեմ այն հարցի, թե ինչո՞ւ թույլ չտվեց... Ասվածի համար որպես լավագույն օրինակ կարող է ծառայել Հ. Սենկևիչի «Յո երթաս» պատմավեպի հերոս Պետրոնիոսի ինքնասպանությունը: Նույնն է (և ավելի վառ) նրա սիրուհու՝ Եվնիկեի դեպքը. Պետրոնիոսը իր բոլոր ձեռնարկները հասցնում է ավարտին և նվագարանների ու պարերի ներքո, գինարբուքի ժամանակ կտրել է տալիս իր զարկերակը: Եվնիկեն, ով, թվում է, կարող էր շատ երջանիկ շարունակել իր կյանքը (Պետրոնիոսն ազատություն էր շնորհել իր նախկին ստրուկի, հետագայում՝ սիրուհի Եվնիկեին և նրան կտակել իր ողջ ունեցվածքը), փարվում է Պետրոնիոսի կրծքին ու իր ձեռքը նույնպես մեկնում երակ կտրող ստրուկին: Հասկանալի կարելի է համարել Մ. Բուլգակովի «Վարպետն ու Մարգարիտան» վեպի հերոս սատանա Վոլանդի թե՛ առաջարկը՝ իր կյանքն անիմաստ կուտակումների վրա վատնող ճաշարանի վարիչին, թե՛ հեգնական ու հիասթափված՝ առաջարկի լուծարումը. մեկ գիշեր խրախճանել, ապա հպարտորեն հեռանալ կյանքից:

Արդ, «արդարացված է» և՛ Պետրոնիոսի ու Եվնիկեի մահը, և՛ ճաշարանի վարիչի հրաժարումը, քանի որ արդարացված ենք համարում մարդու՝ ազատ կամքով ցանկացած ընտրություն՝ որպես կյանքի ու մահվան իմաստ: Կյանքի իմաստ է նաև քրիստոնյա սրբի, կրիչնայական գուրուի, գիտության, գաղափարի կամ հայրենիքի նահատակի ընտրությունը, եթե դա նույնիսկ ինքնասպանություն է:

Եվ այլ է Հ. Սենկևիչի «Առանց դավանանքի» վեպի հերոս Լեոն Պլոշևկու (ով այնքան «սկեպտիկ էր, որ կասկածում էր սեփական սկեպտիկությամբ») կամ Հեգեսիաս Ալեքսանդրացուն ունկնդրած (ու՜մ անվանում էին մահվան դրդիչ, ջատագով՝ մահ քարոզելու համար) փիլիսոփայի գործած ինքնասպանությունը<sup>10</sup>, ու այլ՝ Վերթերի և նրա արարքի ազդեցության տակ ինքնասպանության դիմողի դրությունը: Այս վերջին խմբի մեջ ենք տեսնում նաև Չինգիզ Այթմատովի «Կառափնարան» վեպի հերոս Բոստոնին, ով, երկրորդ անգամ կորցրած լինելով ամեն ինչ, նոր կյանք սկսելու ուժ չունեցավ, և Հ. Թունանյանի Սաքոյին, այսինքն՝ խելագարվածներին:

Եթե վերը թվարկված ինքնասպանների օրինակները խմբավորելու լինենք, ապա կունենանք առնվազն չորս խումբ.

- 1) ինքնասպանություն՝ հանուն վսեմ նպատակի,
- 2) ինքնասպանություն՝ զուտ կենցաղային հողի վրա,

<sup>9</sup> Վ. Տեղյան, Հոգևոր Հայաստան, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1975, էջ 112:

<sup>10</sup> Տե՛ս Чанышев Н., Курс лекций по древней философии, М., "Высшая школа", 1981, էջ 237:

3) ինքնասպանություն՝ դժբախտության հիմքով,

4) ինքնասպանություն՝ հոգեկան հիվանդության պատճառով (այս պարագայում, երբ հոգեբանը համոզվում է, որ գործ ունի հոգեպես վատառողջ անձի հետ, հիվանդին ուղարկում է հոգեբույժի մոտ):

Ակնհայտ է, որ ներկայացված խմբերից խնդրահարույցն առաջինն է: Եվ եթե նույնիսկ, ինչ-որ հիմնավորմամբ, կարողանանք ձեռնպահ մնալ վսեմ նպատակով ինքնասպանության դիմողին կանխարգելելուց, ապա հարցը, թե՛ ի վերջո, ո՞ր դեպքերը համարենք «վսեմ նպատակին» ծառայող ինքնասպանություն, մնում է առկախ. էմոյականության ենթամշակույթի հետևողի համար ինքնասպանություն գործելը ինքնին վսեմ է: Իրապես համոզված էմոն չի կարող երբևիցե երջանիկ լինել, եթե համապատասխան տարիքում իր կյանքն ինքնասպանությամբ չավարտի: Վսեմ նպատակ կարող է դիտվել նաև Եհովայի վկայի ինքնասպանությունը, որը մեկ անգամ «կորցրեց» աշխարհը, երբ, դառնալով Եհովայի վկա, համոզվեց՝ բոլոր մարդիկ, բացի Եհովայի վկաներից, սատանայի ծառաներ են, աշխարհը՝ սատանայի արքայություն, իսկ հետո, ինչ-ինչ պատճառներով «Դիտարանի կազմակերպությունից» հեռացվելով, կորցրեց նաև այդ նոր ու, իր համոզմամբ, միակ սուրբ աշխարհը:

Վերջապես, վերն առանձնացված ինքնասպանների բոլոր խմբերի ինքնասպանություններն էլ կարող են, առնվազն տվյալ ինքնասպանների համար (իսկ հոգեբանի համար էականը հենց սա է), դիտվել որպես անխուսափելիորեն ցանկալի, ազատ կամքով ընտրված կյանքի իմաստ ու նպատակ, վսեմ առաքելություն:

Արդ, եթե, որոշ վերապահումներով հանդերձ, ընդունենք, որ որպես հոգեբանի այցելու կարելի է որակել այն անձանց, ովքեր ինքնակամ դիմում են նշված մասնագետին, ապա այս բնորոշումը չի կարող կիրառվել ինքնասպանության հոգեբանի պարագայում. քիչ չեն դեպքերը, երբ մարդիկ, ովքեր դիմել են ինքնասպանության, երբեք չեն էլ ենթադրել, թե կդիմեն այդ քայլին, հետևաբար՝ ինքնակամորեն հոգեբանին դիմելու կանխադրույթը, այս առումով, իսպառ անհիմն է: Քննություն չի բռնում նաև այն դրույթը, ըստ որի, ինքնասպանության հոգեբանը պետք է կենտրոնանա խոցելի խմբերի վրա այն պարզ հիմնավորմամբ, որ կարելի է վկայակոչել ինքնասպանության բազմաթիվ դեպքեր, երբ ինքնասպանը ոչ մի խոցելի խմբի չի պատկանել և/կամ չի դրսևորել ոչ մի տիպի շեղված վարքագիծ...

Այսպիսով՝ առաջադրված հարցը, թե ո՞վ է այն հնարավոր սուիցիդենտը՝ ինքնասպանը, որը ենթակա է կանխարգելման և համարվում է սուիցիդալ հոգեբանի թիրախ՝ ինքնասպանության հոգեբանության ուսումնասիրության օբյեկտ, մնում է անպատասխան:

Արդեն նշվեց, որ ցանկացած գիտակարգի պարագայում ուսումնասիրության օբյեկտի հստակեցումն էական նշանակություն ունի: Այս դեպքում ինքնասպանության հոգեբանի թիրախ հանդիսացող անհատի ով լինելու փնտրտուքն ու գյուտը կենսական նշանակություն ունեն սուիցիդալ հոգեբանի և՛ տեսական, և՛ գործնական գործունեության ծավալման համար: Վերջապես՝ սույն քննարկմամբ փորձեցինք ցույց տալ, որ դեռևս հստակեցված չէ ինքնասպանության հոգեբանության ուսումնասիրության օբյեկտը: Հետևաբար՝ հարցականի տակ է նաև ինքնասպանության հոգեբանության՝ իբրև գիտակարգի դիտարկման խնդիրը:

### Օգտագործված գրականություն

1. Աստուածաշունչ
2. Ե. արքեպիսկ. Պետրոսյան, Որոգիներս, Աղոթքի մասին, Առաջաբան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007:
3. Ի. Աստուածագգեսց, Թղթեր, Եր., 2003:
4. Կ. Վարդանյան, Անձի հոգեբանական առանձնահատկությունների դերը սուիցիդալ վարքի պատճառականության շղթայում (ինքնասպանի հոգեբանական նկարագիրը), Եր., 2008:
5. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1975:
6. Асмус В., Античная философия, издание 2-е. М., “Высшая школа”, 1976.
7. Чанышев Н., Курс лекций по древней философии. М., “Высшая школа”, 1981.
8. Дюркгейм Э., Самоубийство: социологический этюд, под ред. В. А. Базарова. М., “Мысль”, 1994.
9. <http://www.investopedia.com/terms/c/ceterisparibus.asp>

**ГЕВОРГ АКОПЯН**

*Преподаватель кафедры Философии и истории армянского народа АГЭУ*

***К вопросу о рассмотрении психологии самоубийства как научной дисциплины.*** – В статье рассматривается вопрос о праве суицидальной психологии считаться научной дисциплиной. К этой отрасли психологии выдвигаются те минимальные стандарты, которые являются обязательными для всех научных дисциплин. Проведенный анализ показывает множество неопределенностей, которые существуют в этой концепции и ставят под сомнение возможность трактовки суицидальной психологии как научной дисциплины.

**Ключевые слова:** *самоубийца, психолог, задача, цель, предотвращение, научная дисциплина.*

JEL: Y8, Y90

**GEVORG HAKOBYAN**

*Lecturer at the Chair of Philosophy and Armenian History at ASUE*

***On the Issue of Considering Suicide Psychology as a Scientific Discipline.*** – The article considers the possibility of Suicidal psychology to be entitled as a scientific discipline. Concerning this branch of psychology minimum standards are put forward, which are mandatory for all scientific disciplines. The analysis shows many uncertainties existing in this concept, calling into question the possibility of regarding Suicidal psychology as a scientific discipline.

**Key words:** *suicide, psychologist, goal, target, prevention, discipline.*

JEL: Y8, Y90